

2122

1932

3KN13

4-75

ՀԱՄԱԿ(Բ)Կ XVII ԿՈՆԳՐԵՍՍԻ ՆՅՈՒԹԵՐԸ

ՍՏ. ԿՈՄԻՏԵ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ
ԿՍՏԵՂԾԵՆՔ
ԱՆԴԱՍԱԿԱՐԳՍՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

№ 2001

3K713

4-75

2010

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՈՌՈՏՈՎ-ԴՈՆ

1932

ՍՏ. ԿՈՍԻՈՐ

ՅԿՈՒՅ

Կ-75

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՆԳԱՄՅԱԿՈՒՄ
ԿՍՏԵՂԾԵՆՔ
ԱՆԴԱՍԱԿԱՐԳՍՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԿ(Բ)Կ XVII ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԶԱՌԸ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ԹՈՍՏՈՎ-ԴՈՆ

1932





Книгоиздательство
„Северный Кавказ“

18819-59

Վորքան ավելի խորանում ես մտքով քաղաքական ու տնտեսական այն խնդիրների մեջ, վորոնք դրված են ներկա կոնֆերանսի առաջ կենտրոնական կոմիտեյի կողմից՝ չի՞ր բորդ հնգամյակին վերաբերյալ նրա ղերեկադիրների նախագծում, այնքան ավելի ես զգում նույն խնդիրների մեծությունը և քաղաքական ու սկզբունքային խոչորադույն նշանակությունը:

Այն, ինչ վոր մենք կատարելու յինք առաջիկա հնգամյակի ընթացքում, ճիշտ վոր մի քանի քանակ կարևորություն ունեցող խնդիր է: Մենք վերջնականապես պետք է վերացնենք կապիտալիստական տարրերը և ընդհանրապես դասակարգները, պետք է լիովին վաճառենք դասակարգային խաբույթուն ու շահագործում առաջացող պատճառները, պետք է հաղթահարենք կապիտալիզմի մնացորդներն եկոնովիկայում ու մարդկանց դիտակցության մեջ: Մենք պետք է ստեղծենք անդասակարգ հասարակության հիմունքները: Միայն այն խոչոր հաջողությունները, վորը ձեռք բերեց մեր կուսակցությունը բանվոր դասակարգի հետ միասին՝ հնգամյա պլանի կենսագործման համար մղված յերեքամյա պայքարի ընթացքում, միայն այդ հաջողություններն են, վոր հնարավորություն են տալիս բացառիկ մե:

ծոթյուն ու նշանակութիւն ունեցող խնդիրներ գնելու:

Մի շարք ընկերներ, վորոնք այստեղ յելուժ ունեցան, շատ ուղիղ և մեծագուշն ենտուգիադմով ու վոգեվորությամբ դարգացրին մանավանդ հիմնական քաղաքական խնդիրների թեզիսը, վորչափ այդ վերաբերվում են նրա տեսական ու գործնական նշանակությանը: Յեւ ճիշտ վոր, այս խնդիրները չեն կարող առաջ չբերել բացառիկ խանգավառութիւն, ուժերի բացառիկ վերելք բոլոր բոլշևիկներին, բանվորների մեջ վոչ միայն մեր յերկրի, այլ և ամբողջ աշխարհի բանվորության մեջ:

Յեւ կկասենայի կանգ առնել հարցի այն կողմի վրա, վորը վերաբերվում է խնդիրներին պրակտիկական կենսագործման, կանգ առնել այն դժվարութիւնների վրա, վորոնք անխուսափելիք են առաջ պիտի գան հիշյալ խնդիրների կենսագործման ժամանակ: Առաջին—նոր հնգամյակին մենք անցնելու յենք 1932 թ. ծրագրերի կենսագործման ճամբով: Յերկրորդ—բոլշևիկյան ամենավճռական, ամենահամառ, հետեողական պայքարի ծրագիրն է հանդիսանում յերկրորդ հնգամյակի ծրագիրը: Զարդացնելով մեր ծրագիրը բանվորական մասսաների տուալ, մենք կազմակերպում ենք դրանով նույն բանվորական մասսաներին նրա կատարման համար: Անցած ժամանակի փորձը ցույց է տալիս, վոր բոլշևիկյան կուսակցութիւնն այդ անում է լիակատար հաջողությամբ: Բայց մեզ անհրաժեշտ է ամենայն պարզությամբ

ցույց տալ բանվոր դասակարգին այն դժվարութիւնները, վորոնց բոլշևիկներն ու բանվոր դասակարգը, ինչ գնով ել լինի, պետք է հաղթահարեն, վորպեսզի լիովին կենսագործվեն այն հոյակապ խնդիրները, վորոնք կանգնած են մեր առաջ յերկրորդ հնգամյակում:

Յերկրորդ հնգամյակի դիրեկտիվները—դա մեր պայքարի ծրագիրն է: Մէ՛ւմ դեմ պայքարի, —թեզիսներում այդ մասին ասված է:

Այս ծրագիրը մենք կկարողանանք կենսագործել, պայքարելով կապիտալիզմի մնացորդների դեմ, վորոնց վերջնականապէս վոչնչացնելու և վերացնելու յենք յերկրորդ հնգամյակի ընթացքում: Դա հետևողական և վճռական պայքար է կապիտալիզմի բոլոր մնացորդների դեմ՝ ինչպէս եկոնոմիկայում, այնպէս ել մարդկանց գիտակցութեան մեջ, և վոչ միայն բանվոր դասակարգի մարդկանց ու կոլտնտեսականների, այլ և զիտակցութեան մեջ այն բաղաժաթիվ մարդկանց, վորոնք մտնում են մեր կուսակցութիւնը: Այս մասին վոչ մի կասկած չի կարող լինել:

Պարզ բան է, վոր կապիտալիզմի հաղթահարումը զիտակցութեան մեջ հավասարապէս վերաբերվում է ինչպէս մեր աշխատանքին արդյունաբերութեան ընտանիքում, այնպէս ել գյուղում: Թե և ներկայումս կուլակն այն աստիճան վոչ չացված ու ջախջախված է, վոր խոսք անգամ չի կարող լինել նրա վտարի կանգնելու մասին, ինչպէս նաև այն մասին, վոր նա կարող է ձուլ մեզ դեպի հետ, բայց և այնպէս կուլակա-

յին ելիմենտները, կապիտալիստական ելիմենտները տակավին գոյութիւն ունենալ Յեւ յեթե անկարող են վիժեցնելու մեր շինարարութիւնը, դեռ ևս րավականաշափ ուժ ունենալ, վորպեսզի վորոշ ժամենտներում, վորոշ պայմաններում, մանավանդ յերբ մենք լավ չենք կազմակերպված, փորձ անեն ձախողելու մեր աշխատանքը մի քանի ճակատամասերում, յերկարացնելու այն ու վորոշ զգալիութիւններ ստեղծելու

Այս մենք պետք ե նկատի ունենանք մանավանդ նրա համար, վորովհետև անող տարածութեան մեջ չենք ապրում մենք: Միջազգային բուրժուազիան չի կարող չթելագործել հուսերով մեր յերկրի կապիտալիստական ելիմենտներին ֆինացորդներին և անշուշտ պիտի փորձի ակտիվացնել նրանց: Ուստի, ձեռնարկելով յերկրորդ հնդամակի կենսագործմանը, մենք պետք ե սորի վաղցիտ յենթարկենք բանվորական մասսաներին՝ զգալիութիւնները հաղթահարելու համար, հնգամյակի կենսագործման պայքարի համար, և ել ավելի բարձր աստիճանի հասցնենք նրանց կազմակերպվածութիւնը: Սա հիմնական ե վճռական պայմանն ե, վորն ապահովելու յե յերկրորդ հնգամյակի առջև զրկած խնդիրների հաղթական կենսագործումը: Առաջին հնգամյակի համար սղկած յերեքամյա պայքարի փորձը ցույց ե տալիս, վոր այս խնդիրը մենք կկարողանանք հաջողութեամբ կենսագործել:

Չափազանց վտանգ վոր են մեր պայմաններում ինքնահոսի այն բաղամասնակ տրամադրու-

թիւնները, վորոնք մեծ թվով գոյութիւն ունենալ տակավին ու վտարից գոյութիւն թշնամական են բոլշիւիզմին: Իսկ յե ամենափակական աջ ոպորտունիզմը, մեզ թշնամի ելիմենտներն աշխատանքը թեթեացնողը:

Վոմանք կարծում են, թե քանի վոր մենք արդեն վտար ենք կոխել կապիտալիստական ելիմենտների վերջնական վերացման ժամանակաշրջանը և առաջակարգ հասարակութիւն ենք ստեղծում, ապա ուրեմն պարզ ե, վոր այս պայմաններում գործն ինքը մի կերպ կգտնի իր ընթացքը, հետեւեալ և ուժերը լարելու առանձին կ'ընթացի: Ինքնահոսի հոգեբանութիւնը բոլշիւկներին ոտար ե, ուստի և հաղթելու համար անհրաժեշտ ե արմատախիլ անել այդ տրամադրութիւնները, վորոնք զփրախտաբար դեռ շատ են տարածված մեղանում:

Նույնը պետք ե ասել նաև ամեն տեսակ «ձախլիկ» շեղումների և այն մարդկանց մասին, վորոնք բոլորովին անտես են անում աշխատանքի վորոշ պայմանները, վորոշ հտապները և ձգտում են մի անդամից ցատկել ու հասնել մեր աշխատանքի ամենավերջին կետին, առանց վորեւե աշխատանք թափելու, վորպեսզի մարդկանց կարողանան հասողել ու դաստիարակել: Ակնհայտի յե, վոր յերկրորդ հնգամյակի կենսագործման ընթացքում մեր մեջ շատ պետք ե լինեն նման տրամադրութիւններ: Մեր կուսակցութիւնը, կուսակցութեան կենտրոնական կոմիտեն առաջվա նման ստիպված պիտի լինեն վարելու ամեն-

նահաստատուն, հետևողական բուհերիկյան գիծ, վորի մարմնացումը մեր կուսակցութեան մեջ հանդիսանում է բնկ. Ստալինը:

Յերկրորդ հնգամյակի եկոնոմիկական ծրագիրն էլ շարունակել է իր բացառիկ ծավալով: Յես Հալիտի կրկնեմ աշատեղ աշն թվերը, վոր ամենքին հայտնի յեն: Յես կամենում եմ միայն, որինակ բերելով Ուկրաինային, կարճ խոքերով բնորոշել առաջիկա հնգամյակի մեր շինարարութեան թափը:

Ուկրաինայի գործարանները հնգամյակի վերջին արտադրելու յեն 11 միլիոն տոնն չուգուն. դա մի վիթխարի թիվ է: Ընկ. Պաղայի վիշն իր յելույթում խոսեց այն մասին, թե 22 միլիոն տոնն չուգուն ունենալու ծրագիրը քիչ է: Շատ կարելի յի նրա համար, վոր մենք այդ միլիոն տոնների քաշն ավելի յենք ըմբռնում, հիշյալ թվերը մեզ թվում են հոգեղմայլ:

Յեվ սա մետալուրգիայի բնագավառում չե միայն: 120 միլիոն տոնն ամուխը, վոր հնգամյակի վերջին տալու յե Դոնբասը, դա յե մի այնպիսի թիվ է, վորն ընդունակ է հսկայական ենտուզիտաղ առաջ բերել սոցիալիզմի իսկական կառուցողների մեջ: Յեվ բոլոր մյուս բնագավառներում—մեքենաշինութեան, քիմիայի և այլն, վորոնք ծավալելու յեն թեկուղ հենց Ուկրաինայում, թվերը միանգամայն շարունակ են իրենց բացառիկ մեծութեամբ: Վոչ մի ժամանակ և վոչ մի կապիտալիստական յերկիր այդպիսի զարգացում չի ունեցել իհարկե: Զարգացման նույն իսկ

քիչ թե շատ նման տեմպերն էլ անկարելի յեն կապիտալիզմի համար:

Համեմատենք ուկրաինական մինչհեղափոխական խոշոր արդյունաբերութեանը, — իսկ գուք գիտեք, վոր Ուկրաինան հեղափոխութեանից առաջ էլ խոշոր արդյունաբերութեան յերկիր էր — այնտեղ էր ամուխը, այնտեղ էր մետաղը, — ՈւՄՍՀ-ի այսորվա արդյունաբերութեան հետ և մասնավանդ յերկրորդ հնգամյակը վերջանալուց հետո ունենալիք արդյունաբերութեան հետ: Պետք է ասած, վոր կապիտալիզմի մեղ թողած ձեռնարկութեանները, համեմատելով ներկա գիգանտների հետ, վորոնք բուսել են ու բանում են նոր տեղերում կամ բուսել ու բանում են նախկին գործարանների տեղի վրա, կուստարային ձեռնարկութեաններ են հիշեցնում մեզ: Ներկայումս մեր խոշոր արդյունաբերութեան հիմքում տիխունիկ սկան մի բոլորովին նոր բազա յե դրվում:

Միլիոնավոր տոնն չուգունի, միլիոնավոր տոնն ամուխի համար մղվող պայքարը հեշտ բան չի: Մենք այստեղ պետք է վոչ միայն բուհեմիկորեն խոսենք ընդհանուր խնդիրների մասին, այլ անմիջապես, հենց նույն որվանից, յերբ այդ խնդիրները տրված են, նրանց կենսագործմանը ձեռնարկենք:

Անցած տարին, տնտեսութեան կառավարման գործում, մեծագույն հաջողութեանների տարի յեր մեր կուսակցութեան և ամբողջ բանվորական դասակարգի համար: Դեռ յերբեք մենք ամենքս այնքան խորը, այնքան անմիջակա-

նորեն մոտիկ չէյինք յեղել արտադրութեանը, չէյինք թափանցել արտադրութեան ելութեան մեջ, ինչպես այս տարի: Բանիցդուրս յեկա՞մ, վոր արտադրութեանն առաջ մղելու միակ իրական միջոցն այդ է: Դի՛ւ, ենալ արտադրութեանը, կարողանալ նրան կազմակերպել, կարողանալ կազմակերպել ու դասավորել մարդկանց արտադրութեան մեջ, — ահա իսկապես այն, ինչ վոր մեզ հարկավոր է:

Պարզ բան է, վոր մեր առաջ դրված խնդիրներն կենսագործումը մեր բոլոր կուսակցական ու տնտեսական մարմիններից կապահանջի շատ ավելի մեծ կազմակերպութուն, շատ ավելի լավ աշխատանք, քան այդ յեղած է մինչև այժմ: Զե՛ վոր 22 միլիոն տոնն չուղունն իր վոտքերով չի դա, նրան ստանալու համար հարկավոր է պայքար մղել: Նոր տեխնիկա չէ հարկավոր, այդ նոր տեխնիկային տիրապետելու համար անհրաժեշտ է սովորել. անհրաժեշտ է աշխատանքի արտադրողականութեանը բարձրացնել, դիսցիպլինան ամրացնել, մասսաների կուլտուր-տեխնիկական դաստիարակութեանն ուժեղացնել:

Աշխատանքի լավագույն կազմակերպումն էլ ավելի կատարելագործված մեքենաների վրա, — հենց այդ է վորջ բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական սակարդակի բարձրացումը դեպի նորագույն բարձունքները: Համեմատեցե՛ք, որինակ, չուղունի հանուլթին այս տարի — մոտ 5 միլիոն — յերկրորդ հնդամյակի վերջին տալ վաճաղրին հետ — 22 միլիոն — ահա այն պրոպրոցիան վորը վորոշում է բանվոր դասակարգի տեխնի-

կական զարգացման վերելքի աստիճանը: Սրա համար բոլշևիկյան կուսակցութեանը ստիպված պիտի լինի ավելի լավ և ավելի համառորեն կռվել, քան մինչև այժմ: Բոլորովին ուղիղ եւ խոստում այստեղ ընկ. Մոլոտովը, թե անհրաժեշտ է դաստիարակել նոր բանվորներին նորանոր միլիոններ, վորոնք թեև մտնում են արդյունաբերութեան, բայց սովորաբար սոցիալիստական արդունաբերութեան իսկական ու ներգործական կառուցողներ չեն հանդիսանում, վորպիսին պարտական են լինելու: Դաստիարակչական և նոր կադրերի ընդգրկման այս աշխատանքը մեզ մոտ առժամանակ շատ վատ է զրված լիքը պատահականութեան, իբն ինքնահոս, լիքը չեզոքութեան չորս կողմը:

Թեղիսները շատ ուղիղ են նշում այն մեծ նշանակութեանը, վորն ունենալու չէ յերկրորդ հնդամյակի ավարտումը ինչպես քաղաքի և գյուղի հակադրութեանները վերացնելու գործում, այնպես ել ազգային հետամնաց հանրապետութեանների ու ազգային մարդերի վերաբերմամբ:

Կապիտալիզմի քաղաքականութեանն է՛ գնալով ել ավելի ստրկացնել հետամնաց ազգութեաններին: Պրոլետարական դիկտատուրան վորջ միայն վերացրեց ազգերի հարստահարումն, այլև հակապական քայլերով առաջ մղեց նախկին հետամնաց ազգութեանների կոնտրիկական զարգացումը: Դուք լսեցի՞ք ընկ. Կուլբիշևի զեկուցումն այն մասին, թե հնդամյակի ընթացքում ինչպիսի տեմպերով է զարգանալու արդյունաբերու-

թյունը թե Ղազարխանում, թե միջին Ասիայում
և թե մյուս ազգային հանրապետություննե-
րում ու մարդերում: Ընկ. Կուրբչևի ղեկավարման
մեջ առաջ բերված թվերը քաղաքական
խոշոր նշանակություն ունեն: Շատ մեծ տպա-
վորություն է գործում և չափազանց շշմեցնում
է մոջ թե այն, վոր մեզ մոտ, Ուկրաինայում
գոյություն ունեցող տասը գործարանի վրա
ավելանալու յեն, ասենք, այլ ևս տասը գործա-
րան,—այս ել հարկավ չափազանց կարևոր մի
բան է,—այլ շշմեցուցիչն այն է, վոր ազգային
հետամնաց ռալոնները, այդ պարսպ տեղերը,
խոշորագույն արդյունաբերական կենտրոններ են
դառնում, դրված են հաստատուն հիմքերի վրա, և
վորոնք վերջնականապես վերացնելու յեն ազգա-
նակցությունն եկոնոմիկական ու կուլտուրական
հետամնացությունը, վորը ցարական գաղութա-
յին կապիտալիստական ռեժիմից ժառանգություն
է մնացած:

Այստեղ արդեն խոսեցին այն մասին, թե յերկ-
րորդ հնգամյակի կենտրոնական խնդիրներից
մեկը՝ քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրու-
թյունների լրակատար վերացման պայմանների
ստեղծումն է: Հետևաբար կոլտնտեսային մաս-
սաների վերափոխման ու վերադաստիարակման
խնդիրը բացառիկ կարևորություն ունեցող, կենտ-
րոնական ու վճռական խնդիրներից մեկն է
հանդիսանում:

Վերցնենք, որինակ, Ուկրաինան: Մենք
ունենք մոտ 80 սոկոու կոլեկտիվացած չքավոր-

-միջակային տնտեսություններ ու մոտ 40 հազար
կոլտնտեսություն: Հսկայական մի թիվ է այս
Պետք է շիտակ ասել, վոր մենք իհարկե վոչ
միայն չենք ավարտել կոլտնտեսային ճառսանների
յերեկվա այդ մենատնտեսների, սոցիալիստա-
կան վերադաստիարակումն, այլ նոր միայն սկը-
սել ենք կենսագործել այս խոշորագույն և բա-
վականաչափ դժվարին ու բարդ խնդիրը: Այս-
տեղ հարկավոր է զեռ համառ ու շատ լարված
աշխատանք:

Յերկրորդ հնգամյակի պլանի ելական տար-
րերից մեկն են հանդիսանում գյուղատնտեսու-
թյան զարգացման հարցերը—բերքատվության
անպայման բարձրացումը, տեխնիկական կուլ-
տուրաների արտադրությունն նշանավոր չափով
ընդլայնումը, անասնաբուծությունն ծավալումը:
Վորպեսզի կարողանանք ձեռք բերել գյուղատն-
տեսությունն արտադրական ուժերի զարգացումն
այն չափերով, վորոնք մեզ հարկավոր են, մենք
պետք է վոչ միայն վերադինենք գյուղատնտեսու-
թյունը (կոլտնտեսություններն ու խորհրտնտեսու-
թյունները), այլև դրա հետ միասին պետք է սա-
նենք խոշոր դաստիարակչական աշխատանք,
պետք է ստեղծենք մեր կոլտնտեսություններում
աշխատանքի սոցիալիստական նոր կազմակերպու-
թյուններ: Սա ամենասերտ կնրպով կապված է
գյուղատնտեսությունն արտադրական ուժերի
զարգացման հետ:

Բարձրացնել բերքատվությունը, բարելավել
մեր կոլտնտեսականների աշխատանքի կազմա-

կերպումն, առանց արմատախիլ անելու կոլտնտեսականներին չիտակցությունից պանաղան մանր բուրժուական, անհատական նախապաշարունակները, առանց նոր հասկացողություններ արմատացնելու նրանց զիտակցության մեջ,—անկարելի յե Այս բոլորը չափազանց սերտորեն կապված են իրար հետ: Գյուղում նոր կադրեր ստեղծելու ուղղությամբ տակավին քիչ բան է արված՝ համեմատությամբ այն խնդրին, վոր կանգնած է մեր առաջ: Վերջին ժամանակներն, այո, ստեղծվել են կոլտնտեսական մի քանի նոր կադրեր, բայց այդ կադրերը, նրանց մակարդակը ծայր աստիճան անբավարար են աշխատանքի բոլոր բնագավառներում գյուղատնտեսության արտադրական ուժերի առավելագույն ղարգացման խնդիրը կենսագործելու համար:

Ներկայումս, որինակ, հացամթերումները հանդուրժյամբ ու արագապես ավարտելու համար մենք չունենք կոլտնտեսություններում բավականաչափ ակտիվ, բավականաչափ կադրեր: Դուք գիտե՞ք, վոր ընթացիկ տարում, թեկուզ հենց Սևկրախնայում, մենք այդ կողմից ունենք մի շարք դժվարություններ: Դա ցույց է տալիս, վոր կոլտնտեսականների ու կոլտնտեսային մասնանների ղեկավարության գործում մեր կազմակերպությունների կողմից շատ քիչ բան է արված: Դա ցույց է տալիս նույնպես, վոր այն խնդիրները, վորոնք մեր առաջն են կանգնած, մենք պետք է լուծենք վճռական կարելի յե արագությամբ: Առանց կոլտնտեսությունների

կազմակերպիչներ ունենալու, առանց սոցիալատական արտադրության իսկական, նոր կազմակերպիչներ ունենալու գյուղում, մենք չենք ամրացնի կոլտնտեսությունները, չենք վերադաստիարակի կոլտնտեսականներին:

Մինչև անգամ արդյունաբերության բնագավառում ահադին նշանակություն ունեն նոր տեխնիկայի նախաձեռնարկները, վորոնք մինչև իրենց ուղն ու ծուծը նվիրված են աշխատանքի նոր կազմակերպության համար մղվող պայքարին է առավել ևս գյուղում, ուր մենք ստիպված ենք լինում գործ ունենալ յերեկվա դեռ մանր արտադրողների մասնանների հետ, բազմաթիվ հին ու ռեակցիոն տրամադրություններին հետ: Այստեղ ճիշտ վոր վճռական դեր է խաղում նոր կադրերի ստեղծումը: Ներկայումս դա մեր աշխատանքի ամենաթույլ կողմն է, ամենացաւոտ կողմն է:

Յե՛կ այստեղ, ավելի քան մի ուրիշ տեղում, պետք է հարձակում գործել ինքնահոսի, չեղոքության ու հետամնացության վրա: Ինչպես կարելի յե գիտել, ռաշոններում մեր կուսակցական կազմակերպությունների կողմից տեղի յեն ունենում կատարյալ չեղոքության չափազանց հաճախակի դեպքեր: Փոխանակ սոցիալատական տնտեսության բոլոր հարցերն էլ բոլշեկիյան համառությամբ դասակարգային լուսաբանությամբ դնելու, շատ անգամ տեղի յենք տալիս հետամնաց տրամադրություններին: Փոխանակ մերկացնելու պետպես տարրերը, վորոնք դեպի

հինն են քաշուս և կաղմալուծուս են կոլտնտես-
տութիւնները. փոխանակ դեմ գնելու կուլակա-
յին ագիտացիային ու անհատական հոգեբանու-
թյանը, — այս բոլորի փոխանակ մենք ամենու-
րեք տեսնում ենք ընդհանուր ֆրազիւն, ապի-
կարութիւն, ոպորտունիստական մտահայեցողու-
թյուն, թե անմեն ինչ բարեհաջող և ընթանում է
Ռուսիկներն այս բոլոր հարցերը պետք է գնեն
շնչտակի, պետք է ակտիվորեն պայքար մղեն
կոլտնտեսութիւնների ամբապնդման համար,
կոլտնտեսային ակտիվի համար, նրա դաստիա-
րակութեան համար: Յեւ միայն հացամթերու-
մանը կատարելով, ցանքի կամ պանիաները հաջո-
ղապես անցկացնելով, կանոնավոր և լավ հողա-
մշակման համար պայքարելով, բերքատուութեան
բարձրացման համար պայքարելով կարելի չի
իրոք ամբապնդել կոլտնտեսութիւններն ու
նոր կադրեր ստեղծել:

Յեզրափակելով խոսքս, յիս կամենում եմ
կանդ առնել նաև այն հարցի վրա, վորը խոշո-
րագույն նշանակութիւն և ունենալու յերկրորդ
հնգամյակի կենսագործման համար միւր տանելիք
հետագա ամբողջ աշխատանքի վրա: ԿԿ.ի թե-
պեսները բացատրիլ ում գնութեամբ շնչտուս
են մասսաների նյութական վիճակի շնչտակի
բարելավման հարցը, շնչտուս են այն հարցը,
վորպիսի յերկրորդ հնգամյակի վերջին սննդա-
մթերքների ավելացումն ապահովված լինի վոչ
պակաս՝ քան 2—3 անգամ: Առաջին հնգամյակը
հիմնական բաղա ստեղծելու պայքարի հնգամ-

յակն եր, բաղա, վորի վրա յերկրորդ հնգամյա-
կում մենք արդեն հնարավորութեան ունենք
զարգացնելու վոչ միայն խոշոր ինդուստրիան,
այլև սուր կերպով զգալ տալ քանիւր դասակար-
գին, կոլտնտեսականներին, գյուղացիներին, հա-
մայն աշխատավորներին իրենց աշխատանքի
արդունքը՝ անդրադարձած իրենց նյութական
զրութեան անմիջական բարելավման վրա: Դա
մեզ համար կլինի լրացուցիչ միջոցառում մաս-
սաներին մօրիլիզացիայի յենթարկելու՝ յերկ-
րորդ հնգամյակում մեր առաջ կանգնած խնդիր-
ների կենսագործման պայքարի համար: Այստեղ
անբաժանելիորեն շարկապված են և՛ աշխատա-
լոր մասսաների գրութեան բարելավումը, և՛ ապ-
րանքաշրջանառութեանը, և՛ խորհրդային առե-
տուրը: Հարկավոր է առավելագույն չափով հար-
մարեցնել մեր արտադրութեանը, մեր թեթև արդ-
յունարերութեանը մասսաների պահանջներին,
նրանց կարիքներին: Առավելագույն արագութե-
ամբ հասցնել սպասողին լավորակ պրոդուկտ:
Այս բանի համար հարկավոր կլինի շատ լուրջ
աշխատանք թափել, մասնավորաւ վոր ներկայումս
մենք այդ ուղղութեամբ առաջին քայլերն
ենք անում միայն: Ընկ. Ստալինի նախաձեռ-
նութեամբ ԿԿ-ը պայքար սկսեց խորհրդային
ապրտնքաշրջանառութեան ընդլայնման, խորհր-
դային առեւտրի ընդլայնման համար, բայց մենք,
յեթե հաշիւի չառնենք, անգնահատելի շատ
թուշ կերպով ենք անցկացնում այս շնչայն
հարցում շատ ինքնուրուշ կոլտնտեսական



կազմակերպությունները և մանավանդ մեր խորհրդային անտեսական ապարատը:

Յերկրորդ հնգամյակի համար պայքարը մենք պետք է սկսենք հենց վաղվանից: 1932 թվականը կլինի մեր հիմնական քննությունը: Ահա ինչ պետք է մտնենք պահենք: Այս հարցին մենք պետք է լուրջ կերպարանք տանք և շեշտակի դնենք թե՛ մեր կուսակցական կազմակերպությունների և թե՛ մասսաների առաջ: 1932 թվի ծրագիրը հանդիսանում է ամենալուրջ նախադրյալը՝ յերկրորդ հնգամյակն անցկացնելու համար նրա կենսագործման հենց առաջին տարվանից սկսած:

1932 թ. մենք պարտական ենք ամենավճռապան քայլն անելու այն խնդիրների կենսագործման պայմաններն ապահովելու համար, վորոնք զրված են այսօր յերկրորդ հնգամյակի համար: Փաստորեն յերկրորդ հնգամյակը մենք սկսում ենք 1932 թվին: Մեր շինարարական պլանն է, մեր ֆինպլանների կենսագործումը 1932 թվին վորոշ աստիճանի լուծելու յե նաև հնգամյակի առաջին տարվա ճակատագիրը:

Մենք զործն այնպես պետք է դնենք, վոր 1932 թ. ժողովրդատնտեսական պլանի կենսագործման համար առավելագույն չափով ողտագործենք մեր կուսակցության, պրոֆմիութենական, տնտեսական աշխատանքի փորձը, մեր մասսաների աշխատանքը, 1931 թվին մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու մեր փորձը, վորպեսզի 1932 թ. ծրագիրն ամբողջապես կա-

տարվի, վորպեսզի մենք հեռացած լինենք այն ճեղքվածքներից, վորոնք մինչև այժմ մեր իրականություն մ ջ շատ ելին և վորոնց վերացման համար ամիսներ են հարկավոր:

Յես իհարկե չեմ կարծում, վոր ամեն բան բորոքվին անսայթաք առաջ կգնա, վոր չեն լինի դժվարություններ, բացեր, բայց թույլ տալ մեզ նաև 1932 թվին այնպիսի «շռայլություն», վորպիսին ճեղքվածքներն են, մենք չենք կարող: Մենք պարտական ենք լինել ավելի շրջահայաց, ավելի ուշադիր և արթուն՝ մանավանդ տնտեսության վճռական ճակատամասերի նկատմամբ:

1932 թվին մենք պայքար կծավախենք ածխի, մ տաղի համար, տրանսպորտի, բերքատվության համար: Յեվ յես կարծում եմ, վոր կան բոլոր տվյալները պատվով դուրս գալու համար պայքարից և դրանով իսկ ապահովելու յերկրորդ հնգամյակի կատարումն այնպես, ինչպես և ապահովել ենք առաջին հնգամյակի կատարումը չորս տարում:

2654



AO-2

Отв. ред. А. Г. Яваньян. Тех. ред. Г. М. Маркьян
Сдано в набор 23/VII—1932 г. Сдано в печать 27/VIII—1932 г.
Объем 96 печ. листа. Тираж 2 000 экз. Статформат А6 105х148

Упокрайлита № 1701 Газ ки, тиг, СККПО Заказ № 3951
Город Ростов на Дону

2013

«Ազգային գրադարան»



NL0035280

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.
цена 10 коп.

34775

0 *hup*



На армянском языке
СТ. КОСИОП

Создадим безклассовое общество
во второй пятилетке

ИЗД-ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳԱՀԱՅՐԵԼ

ՔԱՅՏՈՎ-ԴՈՆ, ՍՈՍՈՎՍՈՍՅԱՆ ՓՈՂ, 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)

